ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԳԴԱԿ ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
15	Գդակ ՍՊԸ	Գդակ ՍՊԸ	Գլխարկ՝ ձմեռային, օֆիսային, մորթով Գլխարկը բաղկացած է լաքապատ կոշտ հովհարից, կողամասերից, հատակից, մորթե ականջակալներից և գործված ոսկեթել հյուսապարանից: Հովհարի հատակը երեսպատված է սև կտորով: Հովհարի լայնությունը 5սմ: Գլխարկաբոլորքի արջևի կենտրոնական մասի մեջտեղում ամրացվում է մետաղական համաձուլվածքից օվալաձև ոսկեգույն գլխարկանշանը (գլխարկանշան փոքր,ոսկեգույն *): Գլխարկանշանը, 32 ճառագայթով , կենտրոնական մասը ՀՀ եռագույն դրոշի գույների շերտագծերով՝ վրայից ոսկեգույն հնգաթև աստղ: Գլխարկաբոլորքի ներքնամասում ամբողջ շրջագծով արտաքինից մշակված է 2.8-2.9սմ լայնության երիզ: Դիմային մասով դեպի ականջակալների տակ՝ եզրերից ամրացվում է ոսկեթել գործված հյուսապարանը, որը կոճկվում է գլխիկավոր, 14մմ կոճակներով: Գլխարկի երեսացուն կարվում է ռիպստոպ տեսակի, կանաչավուն 235գ/մ2 մակերեսային խտությամբ, 44 % բուրդ, 54 % պոլիէսթեր և 2 % լաիկրա մանրաթելերից կազմված կիսաբրդյա անջրանցիկ նյութով ներծծված

			գործվածքից և 1100 գր ոչ պակաս մակերեսային խտությամբ մուգ մոխրագույն արհեստական մորթուց, մորթախավի բարձրությունը 11-13մմ: Գույնի կայունությունը լվացման, չոր շփման և քրտնքի նկատմամբ նվազագույնը 4 բալ: Ներսամասը մզդակվում է 5սմ կողմերով շեղանկյունաձև 8C5BШ արտիկուլի մուգ կանաչավուն աստառով: Տաքացվող ներդիրը ներսից մշակվում է ամրացվող շերտերով և 180-200 գր/մ2 մակերեսային խտությամբ սինտեպոնով: Գլխարկաբոլորքի բարձրությունը 9-9.5սմ: Հետնամասի մորթու լայնությունը մեջտեղում՝ 8,5-9.0սմ: Ականջակալների եզրերը ամրացվում են գլխարկահատակին կիպ: Ականջակալների գլխարկահատակին ամրանում են սև գույնի քուղերով: Գլխարկահատակին, ականջակալների միացման տեղում համապատասխանաբար մշակվում են 4-4.5մմ տրամագծով մետաղական անցքեր: Գլխարկի ներսում աստառի վրա ճակատային մասի մեջտեղում կարվում է 5,5x5 սմ չափսի արհեստական կաշվից պաշտպանիչ շերտ: Գլխարկահատակի կենտրոնում ներսի կողմից դրոշմվում է շեղանկյուն դրոշմ, որի վրա նշվում է գլխարկի չափսը, արտադրող կազմակերպության անվանումը և տարեթիվը: Արտադրվում են 54-62 չափսերի: Արտաքին տեսքը՝ համաձայն ներկայացվող նմուշի: Արկղերում գլխարկները պետք է լինեն չդեֆորմացված: Փաթեթավումը՝ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 3-4 շարք, յուրաքանչյուր շարքում 4-6 հատ առանձին-առանձին: Արկղերրում գլխարկի ներսից, գլխարկաբոլորքի լայնքով տեղադրվում ստվարաթղթե օղակ, գլխարկը չճմթվելու համար: Արկղերը պիտակավորված վրան պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ГДАК ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
15			